ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2022 թվականի սեպտեմբերի 23-ի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի խորհրդի 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:

2. Ֆակուլտետի կազմի մեջ մտնող ‹‹Մ.Մազմանյանի անվան հոգեբանության››, ‹‹Կիրառական հոգեբանության, «Զարգացման և կրթության հոգեբանություն» ‹‹Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի›› ամբիոնների աշխատանքային պլանների, նիստերի օրակարգերի քննարկում և հաստատում:

3. 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի 3-րդ կուրսերի ուսումնաճանաչողական պրակտիկաների կազմակերպման գործընթացի վերաբերյալ քննարկում:

4. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ռ.Հ.Պետրոսյանը

ԼՍԵՑԻՆ.- Ֆակուլտետի խորհրդի 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը: Նա ներկայացրեց ֆակուլտետի աշխատանքային պլանը, նիստերի օրակարգերը /Բոլոր փաստաթղթերը կցված են/:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը խոսեց նաև առարկայական նկարագրերից, մասնավորապես նշեց, որ դրանք պետք է վերանայել, թարմացնել և

լրամշակել, քանի որ ժամանակի ընթացքում լինում են այլ մոտեցումներ և տեսություններ, ուստի պետք է ժամանակին համընթաց քայլել: Նա նաև հավելեց, որ ևս մեկ անգամ պետք է ուշադիր լինել յուրաքանչյուր դասընթացի վերջնարդյունքների ձևակերպմանը և ՄԿԾ-ի վերջնարդյունքների հետ դրանց համապատասխանությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ֆակուլտետի խորհրդի 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ.- Ֆակուլտետի կազմի մեջ մտնող ‹‹Հոգեբանության››, ‹‹Կիրառական հոգեբանության», «Զարգացման և կրթության հոգեբանություն», ‹‹Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի›› ամբիոնների աշխատանքային պլանների, նիստերի օրակարգերի քննարկումը և հաստատումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը, կազմի մեջ մտնող ‹‹Հոգեբանության››, ‹‹Կիրառական հոգեբանության», «Զարգացման և կրթության հոգեբանություն», ‹‹Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի›› ամբիոնների վարիչների պաշտոնակակատարները: Նրանք ներկայացրեցին ամբիոնների աշխատանքային պլանները, նիստերի օրակարգերը /Նշված փաստաթղթերը կցված են/:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը ներկայացրեց ‹‹Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի››, «Զարգացման և կրթության հոգեբանություն» ամբիոնի աշխատանքային պլանները, Լ. Սարգսյանը ներկայացրեց ‹‹Մ.Մազմանյանի անվան հոգեբանության›› ամբիոնի աշխատանքային պլանը, Մ. Ավետիսյանը ներկայացրեց ‹‹Կիրառական հոգեբանության›› ամբիոնի աշխատանքային պլանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ֆակուլտետի կազմի մեջ մտնող ‹‹Մ.Մազմանյանի հոգեբանության››, ‹‹Կիրառական հոգեբանության››, «Զարգացման և կրթության

հոգեբանություն» ‹‹Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի›› ամբիոնների աշխատանքային պլանները, նիստերի օրակարգերը:

ԼՍԵՑԻՆ.- 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի 3-րդ կուրսերի ուսումնաճանաչողական պրակտիկաների կազմակերպման գործընթացի վերաբերյալ քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի փոխդեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Լ. Արամյանը:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի փոխդեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Լ. Արամյանը ներկայացրեց, որ տեղյակ է, որ պրակտիկայի համար անհրաժեշտ աշխատանքները կազմակերպվում են, որպեսզի ամեն ինչ կազմակերպվի ճիշտ ընթացքով:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի 3-րդ կուրսերի ուսումնաճանաչողական պրակտիկաների կազմակերպման ընթացքը գնահատել բավարար:

Լ Ս Ե Ց Ի Ն - Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Իրավաբանական հոգեբանություն մասնագիտության առկա ուսուցման համակարգի մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Սցետլանա Պետրոսյանի՝ 1-րդ կուրսի մասնագիտական պրակտիկայի կրկնության մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.դ., պրոֆեսոր Վ. Կարապետյանը, Հ.գ.թ., դոցենտ Ե. Հովհաննիսյանը, հ.գ.թ. դոցենտ Ս. Մակիչյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Թույլատրել կրկնել Իրավաբանական հոգեբանություն մասնագիտության առկա ուսուցման համակարգի մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Սվետլանա Պետրոսյանի՝ 1-րդ կուրսի մասնագիտական պրակտիկան:

Լ Ս Ե Ց Ի Ն. - Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Իրավաբանական հոգեբանություն մասնագիտության առկա ուսուցման համակարգի

մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Ալինա Խաչիկյանի՝ 1-րդ կուրսի մասնագիտական պրակտիկայի կրկնության մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.դ., պրոֆեսոր Վ. Կարապետյանը, Հ.գ.թ., դոցենտ Ե. Հովհաննիսյանը, հ.գ.թ. դոցենտ Ս. Մակիչյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Թույլատրել կրկնել Իրավաբանական հոգեբանություն մասնագիտության առկա ուսուցման համակարգի մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Ալինա Խաչիկյանի՝ 1-րդ կուրսի մասնագիտական պրակտիկան:

Լ Ս Ե Ց Ի Ն. - Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Հոգեբանություն մասնագիտության առկա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Արտուշի Հարությունյանի՝ 2- րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի կրկնությն մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.դ., պրոֆեսոր Վ. Կարապետյանը, Հ.գ.թ., դոցենտ Եվ. Հովհաննիսյանը, հ.գ.թ. դոցենտ Ս. Մակիչյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Թույլատրել կրկնել առկա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Արտուշի Հարությունյանի՝ 2-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի:

ԼՍԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Հոգեբանություն մասնագիտության հեռակա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի ուսանողուհի Առաքելյան Ադելայի մանկավարժական պրակտիկայի կրկնակի կազմակերման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Հ.գ.դ., պրոֆեսոր Վ. Կարապետյանը, Հ.գ.թ., դոցենտ Ե. Հովհաննիսյանը, հ.գ.թ. դոցենտ Ս. Մակիչյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Կրկնակի կազմակերպել Հոգեբանություն մասնագիտության հեռակա համակարգի 3-րդ կուրսի ուսանողուհի Առաքելյան Ադելայի պրակտիկան ս.թ. սեպտեմբերի 27-հոկտեմբերի 25-ը Երևան քաղաքի թ. 104 հիմն. դպրոցում: Պրակտիկայի մեթոդիստ նշանակել Լ.Քուրքչյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Հոգեբանություն մասնագիտության հեռակա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի ուսանողուհի Գևորգյան Մերինեի մանկավարժական պրակտիկայի կրկնակի կազմակերման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.դ., պրոֆեսոր Վ. Կարապետյանը, Հ.գ.թ., դոցենտ Ե. Հովհաննիսյանը, հ.գ.թ. դոցենտ Ս. Մակիչյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Կրկնակի կազմակերպել Հոգեբանություն մասնագիտության հեռակա համակարգի 3-րդ կուրսի ուսանողուհի Գևորգյան Մերինեի պրակտիկան ս.թ. սեպտեմբերի 27-հոկտեմբերի 25-ը Երևան քաղաքի թ. 104 հիմն. դպրոցում: Պրակտիկայի մեթոդիստ նշանակելԱ.Մուրադյանին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. Պետրոսյան

Իսկականի հետ ճիշտ է՝

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն. Հարությունյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2022 թվականի նոյեմբերի 15-ի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների, մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում և հաստատում:
2. 2022-2023 ուստարվա մագիստրոսական կրթական ծրագրի կազմակերպման գործընթացը ֆակուլտետում:
3. Մագիստրատուրայի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկաների արդյունքների ամփոփում:
4. Միջազգային համագործակցության փոխշահավետ կապերի քննարկում
5. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ռ.Հ.Պետրոսյանը:

ԼՍԵՑԻՆ.- Ավարտական և կուրսային աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների քննարկման և հաստատման մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը, ֆակուլտետի կազմի մեջ մտնող ‹‹Մ.Մազմանյանի անվան հոգեբանության››, «Զարգացման և կրթության հոգեբանություն», ‹‹Կիրառական հոգեբանության, ամբիոնների վարիչների պաշտոնակակատարները և «Մանկավարժության» ամբիոնի վարիչը:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը նշեց, որ անհրաժեշտ է զերծ մնալ թեմաների կրկնություններից և պարզ հիմնախնդիրներ առաջադրելուց, նա հորդորեց խրախուսել ուսանողների ինքնուրույն և ստեղծարար մոտեցումները թեմաների ընտրության հարցում: Նա նաև խոսեց այն մասին, որ պետք է ղեկավարները հետևողականորեն աշխատեն ուսանողների հետ ինչպես կուրսային աշխատանքների պարագայում, այնպես էլ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի դեպքերում: Ծագող խնդիրները պետք է նախապես բարձրաձայնել և համապատասխան լուծումներ գտնել, որպեսզի վերջում էական խնդիրներ չարձանագրվեն: Պետք է բոլոր մասնագետները, ամբիոնները կատարեն իրենց վրա դրված պարտականությունները բարեխղճորեն:

Ամբիոնի պատասխանատուները ներկայացրեցին ավարտական և կուրսային աշխատանքների, ինչպես նաև մագիստրոսական թեզերի թեմաները: /Կուրսային, վարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաները կցված են/:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ավարտական և կուրսային աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաները:

ԼՍԵՑԻՆ- Մագիստրատուրայի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկաների արդյունքների ամփոփման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկանի տեղակալ, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ս.Մակիչյանը ներկայացրեց Մագիստրատուրա 2-րդ կուրսի պրակտիկայի արդյունքները՝ նշելով պրակտիկայի ընթացքում առաջացած տեխնիկական, մեթոդական և ռեսուրսային առանձնահատկությունները: /Մագիստրատուրա 2-րդ կուրսի պրակտիկայի արդյունքները կցված են/:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել Մագիստրատուրայի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկաների արդյունքները:

ԼՍԵՑԻՆ- Միջազգային համագործակցության փոխշահավետ կապերի քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Պետրոսյանը նշեց այլ արտասահմանյան կրթական և հետազոտական կենտրոնների, կազմակերպությունների հետ համատեղ գիտահետազոտական կապեր հաստատելու անհրաժեշտությունը, փորձի փոխանակման հնարավոր ուղիները, մեթոդական-մասնագիտական վերապատրաստման անհրաժեշտությունը: Նա նաև հորդորեց առավել ակտիվություն ցուցաբերել նշված ուղղությամբ: Ֆակուլտետի դեկանի տեղակալ Ս.Մակիչյանը ի հավելումն Ռ.Պետրոսյանի ներկայացրեց առկա համագործակցության ուղղությունները, մասնավորապես Ուկրաինայի Կիևի Տարաս Շևչենկոյի անվան ազգային համալսարանի հետ համագործակցության շրջանակներում և առաջարկությամբ 2022 թվականի հունվարի 24-ին հանդիպում է իրականացվել Կիպրոսի, Լիտվայի գործընկերների հետ՝ Erasmus+ի շրջանակներում ,,Ձեռնարկատիրական հմտություններ սոցիալական աշխատողների համար" խորագրով համատեղ ծրագրի մշակման և ներկայացման նպատակով: 2022 թվականի մայիսի 3-6-ը Erasmus+ ծրագրի շրջանակներում աշխատանքային այցով Մանկավարժական համալսարանում էր Մեծ Բրիտանիայի Քիլի համալսարանի դասախոս, նեյրոլեզվաբան Ստանիսլավ Գլազևսկին: 2022 թվականի ապրիլ ամսին սկիզբ դրվեց նաև Նիդերլանդների Մաստրիխտի համալսարանի հետ համագործակցությանը, որի շրջանակներում առաջարկվեց համագործակցել առցանց դասընթացի շրջանակներում: Ծրագրի բուն փուլը /դասընթաց ուսանողների հետ, խմբային աշխատանքներ/ մեկնարկել է սեպտեմբերի 5-ին և ավարտվել հոկտեմբերի

9-ին: Ծրագրում ընդգրկվել են բակալավրի և մագիստրոսաի կրթության հոգեբանություն մասնագիտության թվով 17 ուսանողներ, որոնք բաժանվել են 4 խմբի: Կատարված աշխատանքները ուսանողները կներկայացնեն դեկտեմբերի 9-ին: Հանդիպմանը ներկա կլինեն նաև Մաստրիխտի համալսարանի ներկայացուցիչները:

2022 թվականի մայիսի 20-ին ֆակուլտետում հանդիպում է տեղի ունեցել Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանի ներկայացուցիչների հետ: Երկուստեք քննարկվեցին մագիստրոսական կրթության ,,Հոգեբանություն" մասնագիտական կրթական ծրագրի համադրելիության խնդիրները և երկու դիպլոմով նոր կրթական ծրագրի մշակման հնարավոր տարբերակները: Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Մարիանա Ավետիսյանն ավարտել է <<Պոզիտիվ հոգեթերապիայի ակադեմիայի (Վիսբադեն, Գերմանիա)>> կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացին (200 ժամ տևողությամբ):

Ամբիոնի դոցենտ Գոռ Եսայանը Կալուգայի պետական համալսարանում 2022թ. մայիսի 26-ին հանձնել է որակավորման քննություն և ստացել է դատական հոգեբան փորձագետի որակավորման դիպլոմ:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն Միջազգային համագործակցության փոխշահավետ կապերի քննարկման հարցը:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Լ Ս Ե Ց Ի Ն. - Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիալական մանկավարժություն մասնագիտության առկա համակարգի 4-րդ կուրսի ուսանողուհի Մերի Սասունի Մելքումյանի և նույն մասնագիտության, հեռակա համակարգի 4-րդ կուրսի ուսանողուհի Կիմա Ալեքսանի Զաքարյանի 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակի բաց թողած պրակտիկայի կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.դ., պրոֆեսոր Կ. Վարդանյանը, Հ.գ.դ., պրոֆեսոր Վ. Կարապետյանը, հ.գ.թ. պրոֆեսոր Ս. Փիլոսյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Կազմակերպել Սոցիալական մանկավարժություն մասնագիտության առկա համակարգի 4-րդ կուրսի ուսանողուհի Մերի Սասունի Մելքումյանի և նույն մասնագիտության, հեռակա համակարգի 4-րդ կուրսի ուսանողուհի Կիմա Ալեքսանի Զաքարյանի 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակի բաց թողած պրակտիկան:

Լ Ս Ե Ց Ի Ն. - Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրոսական կրթական ծրագրերի 2-րդ կուրսի 2-րդ կիսմյակի մասնագիտական պրակտիկայի կազմակերպման ժամանակացույցի փոփոխման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.թ., դոցենտ Ս. Մակիչյանը, հ.գ.դ., պրոֆեսոր Կ. Վարդանյանը, հ.գ.թ. պրոֆեսոր Ս. Փիլոսյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Բոլոր մասնագիտությունների մագիստրոսական կրթական ծրագրերի 2-րդ կուրսի 2-րդ կիսմյակի մասնագիտական պրակտիկան կազմակերպել 2021թ.-ի հոկտեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 18-ը ընկած ժամանակահատվածում:

Լ Ս Ե Ց Ի Ն. - Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2022-2025 Զարգացման Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.թ., ոցենտ Ռ.Պետրոսյանը, Հ.գ.դ., պրոֆեսոր Վ. Կարապետյանը: Ռ.Պետրոսյանը ներկայացրեց զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների պլանը: (Զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների պլանը կցված է):

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Հաստատել Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների պլանը:

Լ Ս Ե Ց Ի Ն. - Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Հոգեբանություն մասնագիտության առկա համակարգի 3-րդ կուրսի ուսանողուհի Մանե Թարվերդյանի բաց թողած պրակտիկայի կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.դ., պրոֆեսոր Կ. Վարդանյանը, Հ.գ.դ., պրոֆեսոր Վ. Կարապետյանը, հ.գ.թ. պրոֆեսոր Ս. Փիլոսյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Կազմակերպել Հոգեբանություն մասնագիտության առկա համակարգի 3-րդ կուրսի ուսանողուհի Մանե Թարվերդյանի բաց թողած պրակտիկան:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. Պետրոսյան

Իսկականի հետ ճիշտ է՝
ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն. Հարությունյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2022 թվականի դեկտեմբերի 5-ի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

6. 2022-2023 ուստարվա մագիստրոսական կրթական ծրագրի կազմակերպման գործընթացը ֆակուլտետում:

7. Ֆակուլտետի ամբիոնների ասպիրանտների և հայցորդների ատեստավորման արդյունքների քննարկում:

8. Մագիստրատուրայի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկաների արդյունքների ամփոփում:

9. Կրթության որակի բարելավմանն ուղղված անելիքների մասին.

• Classroom էլեկտրոնային հարթակում պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող աշխատանքների մասին,

• ԱՈՒՄՓ-ների մշակվածության մասին և այլն:

5. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- Ֆակուլտետի ամբիոնների ասպիրատների և հայցորդների ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը: Նա ներկայացրեց ֆակուլտետի ամբիոնների ասպիրատների և հայցորդների ատեստավորման արդյունքները /Ասպիրանտների և հայցորդների ցանկերը կցված են/:

Կիրառական հոգեբանության ամբիոն

1. Հարությունյան Գերասիմ /ասպիրանտ/
2. Մինասյան Սուսաննա /ասպիրանտ/
3. Բաբայան Ուլյանա
4. Բալդրյան Մելինե
5. Գարոյլանյան Սոսի
6. Գևորգյան Հերմինե
7. Երիբեկյան Բենիկ
8. Իսկաջյան Արմինե
9. Մելքոնյան Արմենուհի
10. Նալբանդյան Նաիրա
11. Մովսիսյան Նաիրա

Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոն

1. Ավագյան Սուսաննա /ասպիրանտ/
2. Կոնջոյան Հասմիկ
3. Միքայելյան Կարինե
4. Դավիթավյան Լիլիթ
5. Մուրադյան Մանուշակ
6. Շահնազարյան Աննա

7. Մակոյան Մարգարիտա
8. Բաղրամյան Անուշ
9. Եղիազարյան Խնկանուշ
10. Սարգսյան Սյուզաննա

Հոգեբանության ամբիոն

1. Հովակիմյան Գարիկ
2. Առաքելյան Քնարիկ
3. Ստեփանյան Լիլիթ
4. Ալեքսանյան Մերի
5. Ղազարեան Մարի
6. Սիմոնյան Վերոնիկա
7. Հովակիմյան Հասմիկ
8. Պողոսյան Արփի
9. Մուղդուսյան Սիրարփիի
10. Մանուկյան Վիգեն
11. Մուրադյան Աննա
12. Պետրոսյան Անահիտ

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել Ֆակուլտետի ամբիոնների ասպիրատների և հայցորդների ատեստավորման արդյունքները:

ԼՍԵՑԻՆ.- Ֆակուլտետում 2022-2023 ուստարվա մագիստրոսական կրթական ծրագրի կազմակերպման գործընթացի մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը: Նա նշեց, որ վերոնշյալ գործընթացը կազմակերպված է հարթ և իրականացվում է ֆակուլտետի ՊԴԱ-ի կողմից անխափան և անթերի ինչպես առերես, այնպես էլ առցանց:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Գնահատել Ֆակուլտետում իրականացվող 2022-2023 ուստարվա մագիստրոսական կրթական ծրագրի կազմակերպման ընթացքը բավարար:

ԼՍԵՑԻՆ.- Մագիստրատուրայի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկաների արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ամբիոնի վարիչները և պրակտիկայի պատասխանատուները: Նշվեց, որ նշյալ պրակտիկան անցկացվել է տարբեր հաստատություններում՝ կախված ուսանողների մասնագիտացումներից: (Պրակտիկայի հաշվետվությունները կցվում են):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել Մագիստրատուրայի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկաների արդյունքները:

ԼՍԵՑԻՆ.-Կրթության որակի բարելավմանն ուղղված անելիքների մասին հարցը, մասնավորապես՝

- Classroom էլեկտրոնային հարթակում պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող աշխատանքների մասին հարցը
- ԱՈՒՄՓ-ների մշակվածության մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի **Գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ Հ.գ.թ. դոցենտ Մակիչյան Ս.-ն, ինչպես նաև ֆակուլտետի որակի պատասխանատու հ.գ.թ. դոցենտ Մ.Ավետիսյանը: Նշվեց առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների կազման վերջին լրամշակումների, դրանց իրականացման վերջնաժամկետների, իրականացման ընթացքի և այլ մանրամասների մասին: ԼՍԵՑԻՆ.-** Կրթության որակի բարելավմանն ուղղված անելիքների մասին.

Նա հավելեց, որ պարբերաբար իրականացվում են ամբիոնային մշտադիտարկումներ, վեր են հանվում յուրաքանչյուր ամբիոնում առկա թերացումները, որոնք ստանում են անհապաղ լուծումներ:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Գնահատել ֆակուլտետի՝ որակի բարելավմանն ուղղված քայլերը բավարար:

ԼՍԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Կիրառական հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների դոկտոր Սրբուհի Ռաֆիկի Գևորգյանին ՀՊՄՀ 100-ամյակի շրջանակներում գիտության և սերունդների կրթության մեջ մեծ ներդրման և հոգեբանամանկավարժական բեղուն գործունեության համար «Խաչատուր Աբովյան» մեդալով պարգևատրելու մասին հարցը: ՀՊՄՀ գիտական խորհուրդ միջնորդելու մասին առաջարկը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – ԿՀՍ ֆակուլտետի դեկան հ.գ.թ. դոցենտ Ռ. Պետրոսյանը, Զարգացման և կրթության հոգեբանության պրոֆեսոր հ.գ.դ., Վ. Կարապետյանը, Հոգեբանության ամբիոնի վարիչ հ.գ.թ., դոցենտ Լ.. Սարգսյանը, Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ հ.գ.թ. դոցենտ Մ.Ավետիսյանը, Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատաքի ամբիոնի վարիչ հ.գ.թ. դոցենտ Գ.Խաչիկյանը, ԿՀՍ ֆակուլտետի փոխդեկաններ հ.գ.թ. դոցենտ Ս. Մակիչյանը, հ.գ.թ. դոցենտ Լ.Արամյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Միջնորդել ՀՊՄՀ գիտական խորհրդին պարգևատրել «Խաչատուր Աբովյան» մեդալով Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Կիրառական հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների դոկտոր Սրբուհի Ռաֆիկի Գևորգյանին ՀՊՄՀ 100-ամյակի շրջանակներում գիտության և սերունդների կրթության մեջ մեծ ներդրման և հոգեբանամանկավարժական բեղուն գործունեության համար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. Պետրոսյան

Իսկականի հետ ճիշտ է՝
ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն.Հարությունյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022-2023ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը:

2. Հաշվետվություն ֆակուլտետի և ամբիոնների 2022թ. կատարած ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների արդյունքների մասին:

3. Ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ՈՒԳԸ աշխատանքների քննարկում:

4. Հեռակա ուսուցման 2022-2023ուստարվա 3-րդ կուրսերի 2- րդ կիսամյակի, 4-րդ կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների և 5-րդ կուրսի մանկավարժական պրակտիկաների կազմակերպման վերաբերյալ:

5. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան հ.գ.թ. դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը:

ԼՍԵՑԻՆ.- 2022-2023ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը: Նա նշեց, որ քննության նախապատրաստական աշխատանքներն ավարտված են. դասավորված են քննական օրերը, պատրաստ և կնքված են քննական հարցատոմսերը և ամեն ինչ պաստրաստ է քննաշրջանը հարթ և անխափան անցկացնելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Գնահատել 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը բավարար:

ԼՍԵՑԻՆ.- Ֆակուլտետի և ամբիոնների 2022թ. կատարած ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը: Նա ներկայացրեց ֆակուլտետի տարեվերջյան հաշվետվությունը /Հաշվետվությունը կցված է/:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը խոսեց նաև համալսարանի 100-ամյակի

շրջանակներում իրականացված միջոցառումների մասին, հրատարակված ձեռնարկների և ժողովածուների, ուսանող-դասախոս գիտահետազոտական համագործակցության, ուսանողների հետազոտական աշխատանքների մրցույթի, և այլ հարցերի մասին: Ներկայացվեցին տպագրված հոդվածների, դասախոսների՝ տարբեր միջազգային վերապատրաստումներին մասնակցության տվյալները: Հաշվետու տարում արձանագրվել են նաև մի քանի հուշագրերի կնքման գործընթացներ: Ռ.Պետրոսյանը առանձնացրեց ֆակուլտետի՝ տարբեր հուշամեդալներով,, պատվոգրերով և շնորհակալագրերով պարգևատրված դասախոսներին:

Ռ.Պետրոսյանը փաստեց, որ հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի մի քանի դասախոսներ իրականացրել են ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ (30 կրեդիտ):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Գնահատել ֆակուլտետի և ամբիոնների 2022թ. կատարած ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների ընթացքը բավարար:

ԼՍԵՑԻՆ.- Ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ՈՒԳԸ աշխատանքների տարեվերջյան հաշվետվությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Ի.Անանյանը և ՈՒԳԸ նախագահ Ս.Գրիգորյանը: Ի.Անանյանը ներկայացրեց, որ

Ս.Գրիգորյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում ՈՒԳԸ-ն ակտիվորեն մասնակցել է ուսանողների գիտական գործունեության ակտիվացման, գիտական հրապարակումների խրախուսման, ուսանողների՝ ներբուհական և արտաբուհական միջացառումներին անմիջական մասնակցության կազմակերպման հարցերով, ինսչպես նաև հավելեց, որ այն իր անմիջական ներդրումն է ունեցել ՀՊՄՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Հոգեկան առողջությունը.ձևավորման և պահպանման ուղիները» խորագրով սեմինարի կազմակերպչական աշխատանքներին: (ՈՒԽ և ՈՒԳԸ հաշվետվությունները կցված են):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Բավարար գնահատել Ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ՈՒԳԸ աշխատանքների տարեվերջյան հաշվետվությունները:

Լ Ս Ե Ց Ի Ն - Կիրառական հոգեբանության ամբիոնի դասախոս, հոգեբանական գիտությունների թեկնածու Արմեն Կարապետի Աբգարյանի դոցենտության երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Մ.գ.թ. դոցենտ Մ.Իսպիրյանը, Հ.գ.թ. դոցենտ Ռ.Պետրոսյանը

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Երաշխավորել դոցենտության ամբիոնի դասախոս, հոգեբանական գիտությունների թեկնածու Արմեն Կարապետի Աբգարյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն. - Կիրառական հոգեբանության ամբիոնի հայցորդ Գոհար Վալերիկի Անտոնյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.դ., պրոֆեսոր Կ. Վարդանյանը, հ.գ.թ. դոցենտ Մ. Ավետիսյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Հաստատել Կիրառական հոգեբանության ամբիոնի հայցորդ Գոհար Վալերիկի Անտոնյանի թեման՝ «Հուզական, սոցիալական ինտելեկտի և բնավորության գծերի հարբերակցությունը դեռահասների փոխհարաբերություններում» ԺԹ.00.05 /Զարգացման և կրթության հոգեբանություն/մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել հ.գ.թ., դոցենտ Մ.Ս. Ավետիսյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն. - Կիրառական հոգեբանության ամբիոնի ասպիրանտ Արմեն Սամվելի Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.դ., պրոֆեսոր Կ. Վարդանյանը, հ.գ.թ. դոցենտ Ռ. Պետրոսյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Հաստատել Կիրառական հոգեբանության ամբիոնի ասպիրանտ Արմեն Սամվելի Ավետիսյանի թեման՝ «Ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելման հիմնախնդիրը Հայաստանում» ԺԹ.00.03 /Սոցիալական

հոգեբանություն/մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել հ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ռ. Գևորգյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն. - Հոգեբանության ամբիոնի հայցորդ Լիլիթ Ստեփանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.դ., պրոֆեսոր Կ. Վարդանյանը, հ.գ.թ. դոցենտ Ա. Բեջանյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Լիլիթ Ստեփանյանի ատենախոսության թեման հաստատել «Պատերազմի մասնակիցների սթրեսին տրվող քոփինգ ռազմավարության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները»՝ Սոցիալական հոգեբանություն ԺԹ00.03 մասնագիտական թվանիշով, գիտական ղեկավար նշանակել հ.գ.թ., դոցենտ Լևոն Սարգսյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն. - Հոգեբանության ամբիոնի հայցորդ Քնարիկ Առաքելյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.դ., պրոֆեսոր Կ. Վարդանյանը, հ.գ.թ. դոցենտ Ա. Բեջանյանը, Հ.գ.թ. դոցենտ Լ.Սարգսյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Հաստատել Քնարիկ Առաքելյանի «Անձի ներընտանեկան զահայնացման հոգեբանական առանձնահատկությունները» խորագրով թեման Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանությյն մասնագիտությամբ ԺԹ00.01 մասնագիտական թվանիշով, գիտական ղեկավար նշանակել Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի Շեղվող վարքի և հոգեկան առողջության ամբիոնի վարիչ հ.գ.դ., պրոֆեսոր Ալլա Վադիմի Շաբոլտասին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչի պաշտոնակատար հ.գ.թ. դոցենտ Գայանե Անդրանիկի Խաչիկյանին համալսարանի գիտական խորհրդի կազմում ընդգրկելու առաջարկի մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – ԿՀՍ ֆակուլտետի դեկան հ.գ.թ. դոցենտ Ռ. Պետրոսյանը, ԿՀՍ ֆակուլտետի փոխդեկաններ հ.գ.թ. դոցենտ Ս. Մակիչյանը, հ.գ.թ. դոցենտ Լ.Արամյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հաստատել ՀՊՄՀ գիտական խորհրդի կազմում Գայանե Անդրանիկի Խաչիկյանին ընդգրկելու մասին առաջարկը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. Պետրոսյան

Իսկականի հետ ճիշտ է՝

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն.Հարությունյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2023 թվականի փետրվարի 14-ի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի 2022-2023 ուստարվա ձմեռային քննաշրջանի արդյունքները:
2. Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2-րդ կուրսերի մանկավարժական (ուսումնաճանաչողական) պրակտիկաների կազմակերպման աշխատանքների մասին:
3. 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի 3-րդ և 4-րդ կուրսերի մանկավարժական/ուսումնական պրակտիկաների արդյունքների ամփոփում:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան հ.գ.թ. դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը:

ԼՍԵՑԻՆ Ֆակուլտետի 2022-2023 ուստարվա ձմեռային քննաշրջանի արդյունքների մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը: Նա ներկայացրեց ֆակուլտետի քննաշրջանի արդյունքները, վերհանեց քննական գործընթացի կազմակերպման հետ կապված հիմնական հարցերը՝ նշելով, որ ֆակուլտետի համար հիմնախնդիր է դասախոսների կողմից ամփոփոագրերի ոչ ժամանակին փակելու հարցը: /Կցված է/:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Բավարար գնահատել 2022-2023 ուստարվա ձմեռային քննաշրջանի արդյուքններին ուղղված գործընթացները:

ԼՍԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2-րդ կուրսերի մանկավարժական (ուսումնաճանաչողական) պրակտիկաների կազմակերպման աշխատանքների մասին: Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 3-րդ կուրսերի մանկավարժական/ուսումնական պրակտիկաների կազմակերպման աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի փոխդեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Լ. Արամյանը ներկայացրեց, որ տեղյակ է, որ պրակտիկայի համար անհրաժեշտ աշխատանքները կազմակերպվում են, որպեսզի ամեն ինչ կազմակերպվի ճիշտ ընթացքով:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 2022-2023 ուստարվա 2-րդ կուրսերի մանկավարժական (ուսումնաճանաչողական) պրակտիկաների կազմակերպման աշխատանքների մասին: Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 3-րդ կուրսերի մանկավարժական/ուսումնական պրակտիկաների կազմակերպման աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի 3-րդ և 4-րդ կուրսերի մանկավարժական/ուսումնական պրակտիկաների արդյունքների ամփոփման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Կրթական ծրագրերի պրակտիկայի ղեկավարները: Նրանք մանրամասն ներկայացրեցին յուրաքանչյուր կորսի պրակտիկաների արդյունքները, կազմակերպման առանձնահատկությունները, ծագած հարցերը, պրակտիկայի բազաների նպատակահարմարությունը, ուսանողները արձագանքները և հետադարձ կապերը: /Հաշվետվությունները կցված են/:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Բավարար գնահատել 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի 3-րդ և 4-րդ կուրսերի մանկավարժական/ուսումնական պրակտիկաների կազմակերպման գործընթացը և արդյունքները:

Լ Ս Ե Ց Ի Ն. - Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի հոգեբանություն հեռակա բակալավր համակարգի 4-րդ կուրսի ուսանողուհի Պետրոսյան Աղավնիի, Մախսուդյան Մարիայի և հեռակա բակալավր համակարգի 5-րդ կուրսի

ուսանողուհի Հովհաննիսյան Դիանայի և Դավթյան Անիի մանկավարժական պրակտիկայի կրկնակի կազմակերպման մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.թ., դոցենտ Ս. Մակիչյանը, հ.գ.դ., պրոֆեսոր Կ. Վարդանյանը, հ.գ.թ. պրոֆեսոր Ս. Փիլոսյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Կազմակերպել Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Հոգեբանություն հեռակա բակալավր համակարգի 4-րդ կուրսի ուսանողուհի Պետրոսյան Աղավնիի Մախսուդյան Մարիայի և հեռակա բակալավր համակարգի 5-րդ կուրսի ուսանողուհի Հովհաննիսյան Դիանայի և Դավթյան Անիի մանկավարժական պրակտիկան:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. Պետրոսյան

Իսկականի հետ ճիշտ է՝

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն.Հարությունյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6.

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2023 թվականի մարտի 16-ի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

5. Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի կանոնադրության հաստատում:

6. 2022-2023ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ակադեմիական պարտքերի մարման արդյունքները:

7. Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 3-րդ կուրսերի մանկավարժական/ուսումնական պրակտիկաների կազմակերպման աշխատանքների մասին:

8. Մագիստրատուրայի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկաների կազմակերպման ու անցկացման նոր ձևերի քննարկում:

9. Կրթության որակի բարելավմանն ուղղված անելիքների մասին.

• ԱՈՒՄՓ-ների մշակվածության մասին և այլն:

10. Classroom էլեկտրոնային հարթակում պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող աշխատանքների մասին,

11. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան հ.գ.թ. դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը:

ԼՍԵՑԻՆ Ֆակուլտետի կանոնադրության հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը: Նա ներկայացրեց ֆակուլտետի կանոնադրության հիմնական ասպեկտները: /Կանոնադրությունը կցված է/:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի կանոնադրությունը:

ԼՍԵՑԻՆ Ֆակուլտետի 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ակադեմիական պարտքերի մարման արդյունքների հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը: Նա ներկայացրեց ֆակուլտետի քննաշրջանի ակադեմիական պարտքերի մարման գործընթացի մանրամասները, արդյունքները, գործընթացի կազմակերպման հետ կապված հիմնախնդիրները: /Կցված է/:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Բավարար գնահատել 2022-2023 ուստարվա ձմեռային քննաշրջանի պարտքերի մարման արդյուքններին ուղղված գործընթացները:

ԼՍԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 3-րդ կուրսերի մանկավարժական/ուսումնական պրակտիկաների կազմակերպման աշխատանքների մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի փոխդեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Լ. Արամյանը ներկայացրեց պրակտիկայի համար անհրաժեշտ աշխատանքները կազմակերման ընթացը և անհրաժեշտ վյալները, պրակտիկաի ն ախատեսվող բազեները և ռեսուրսները, որպեսզի ամեն ինչ կազմակերպվի անթերի և արդյունավետ:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 3-րդ կուրսերի մանկավարժական/ուսումնական պրակտիկաների կազմակերպման աշխատանքների մասին հարցը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- Մագիստրատուրայի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկաների կազմակերպման ու անցկացման նոր ձևերի մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի փոխդեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ս. Մակիչյանը և ամբիոնի վարիչները: Ս.Մակիչյանը ներկայացրեց պրակտիկայի կազմակերպման ժամանակատվածը և վերջինիս արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ աշխատանքները ընթացը՝ նշելով, որ ջանքեր են տարվում նոր պրակտիկայի բազեներ ներգրավելու համար, որպեսզի ամեն ինչ կազմակերպվի ի օգուտ ուսանողի:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Մագիստրատուրայի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկաների կազմակերպման ու անցկացման նոր ձևերի ուղղությամբ տարվող աշխատանքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ Կրթության որակի բարելավմանն ուղղված անելիքների, մասնավորապես՝

- ԱՈՒՄՓ-ների մշակվածության մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը: Նա նշեց որակի ապահովմանն ուղղված գործընթացների անհրաժեշտությունը, ներկայացրեց կրթության որակի ապահովման վերջին միտումներն ու ուղղությունները: Ֆակուլտետի կրթության որակի պատասխանատու Մ.Ավետիսյանը ներկայացրեց յուրաքանչյուր ֆակուլտետում իրականացվող միջոցառումների կազմակերպման ընթացքն ու արդյուքնները, ուսանողների և ՊԴԱ-ի հետ տարվող

հարցումների արդյունքներն ու քննարկումները, անհրաժեշտ փոփոխությունների ծավալն ու ուղղությունները:

Առանձնահատուկ շեշտադրվեց առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների համապատասխանության, վերջնարդյունքներով կողնորոշման կարևորությունը, կոմպետենցիաներով ուղղորդվելու և դրանցում հանձնարարությունների բլոկը ուժեղացնելու անհրաժեշտությունը: Մանավորապես ընդգծվեց գնահատման բաղադրիչների սանդղակների կարևորությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Բավարար գնահտել ակրթության որակի բարելավմանն ուղղված անելիքներին ուղղված աշխատանքները:

ԼՍԵՑԻՆ - Classroom էլեկտրոնային հարթակում պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող աշխատանքների մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը: Նա առանձնացրեց Classroom հարթակում հանդիպող հիմնական աշխատանքների ընթացքը, հանդիպող խնդիրները, դրանց շտկմանն ուղղված գործողությունների կարևորությունը: Ֆակուլտետի որակի պատասխանատու Մ.Ավետիսկանը ավելացրեց Classroom էլեկտրոնայիին հարթակի աշխատանքներին ուղղված ամենամսյա մշտադիտարկման արդյունքները՝ նշելով, որ ամբիոնների աշխատանքները այս հարթակում գոհացուցիչ են, սակայն նկատվում են մի քանի թերացումներ՝ մասնավորապես ներկա-բացակաների, առցանց դասընթացների լուսանկարների կամ դասախոսությունների՝ ժամանակին տեղադրման հետ, որոնք այնուամենայնիվ ամբիոնների որակի պատասխանատուների արագ արձագանքման պարագայում շտկվում են:

ՈՐՈՇԵՑԻՆ - Բավարար գնահատել Classroom էլեկտրոնային հարթակում պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող աշխատանքների ընթացքը:

Ընթացիկ հարցեր

Լ Ս Ե Ց Ի Ն - Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դասախոս, ս.գ.թ. Սամվել Մանուկյանի դոցենտության երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Մ.գ.թ. դոցենտ Մ.Իսպիրյանը, Հ.գ.թ. դոցենտ Ռ.Պետրոսյանը, Հ.գ.թ. դոցենտ Գ.Խաչիկյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Երաշխավորել դոցենտության Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դասախոս, ս.գ.թ. Սամվել Մանուկյանին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. Պետրոսյան

Իսկականի հետ ճիշտ է՝

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն.Հարությունյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7.

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2023 թվականի ապրիլի 28-ի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022-2023 ուս.տարվա ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:
2. Ֆակուլտետի հեռակա ուսուցման 3-5-րդ կուրսերի բակալավրիատի մանկավարժական/ուսումնական պրակտիկաների արդյունքների ամփոփում:
3. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության երաշխավորման մասին:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ռ.Հ.Պետրոսյանը:

ԼՍԵՑԻՆ.- 2022-2023 ուս.տարվա ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը նշեց, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատված է:

Դեկանը նաև հավելեց պաշտպանությունների կազմակերպման ընթացի մանրամասները՝ նշելով, որ ուսանողների տեղեկացվածությունը քննության ընթացքի և առանձնահատկությունների մասին: Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ հ.գ.թ. դոցենտ Մ.Ավետիսյանը ավելացրեց, որ բոլոր նախապատրաստական աշխատանքները պատշաճ կատարված են՝ ըստ ընթացակարգի և ժամկետների:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Գնահատել 2022-2023 ուս.տարվա ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների ընթացքի բավարար:

ԼՍԵՑԻՆ.- Ֆակուլտետի հեռակա ուսուցման 3-5-րդ կուրսերի բակալավրիատի մանկավարժական/ուսումնական պրակտիկաների արդյունքների ամփոփման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսումնական գծով դեկանի տեղակալ, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Լ.Արամյանը ներկայացրեց պրակտիկայի իրականացման մանրամասները, պաշտպանության ընթացը և արդյունքները, ուսանողների՝ պաշտպանության ներգրավվածության աստիճանը և ընթացքում ծագած կազմակերպչական խնդիրները: Հոգեբանության ամբիոնի պատասխանատու Ե.Հովհաննիսյանը ներկայացրեց տվյալ ամբոինի պրակտիկայի արդյունքները, իսկ Կիրառական

հոգեբանության ամբիոնի պրակտիկայի պատասխանատու Ա.Առաքելյանը ներկայացրեց նշված ամբոինի արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել հեռակա ուսուցման 3-5-րդ կուրսերի բակալավրիատի մանկավարժական/ուսումնական պրակտիկաների արդյունքները:

ԼՍԵՑԻՆ.- Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության երաշխավորման մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը և ամբիոնների վարիչները: Ռ.Պետրոսյանը ներկայացրեց նախապաշտպանությունների կազմակերպչական հարցերը, կանոնադրական որոշումները, որոնց համաձայն, եթե ուսանողը չի երաշխավորվել ամբիոնային նախապաշտպանության ժամանակ, այնուամենայնիվ նա իրավունք ունի մասնակցել ամփոփիչ ատեստավորմանը գիտական ղեկավարի դրական եզրակացության հիման վրա: (Նախապաշտպանության արդյունքները կցված են): Ամբիոնի վարիչները ներկայացրեցին համապատասխան ամբիոնների երաշխավորված և չերաշխավորված, ինչպես նաև պայմանական երաշխավորված ուսանողների ցանկերը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության երաշխավորման մասին հարցը:

Ընթացիկ հարցեր

** Լ Ս Ե Ց Ի Ն. -** «Հոգեբանական հետազոտություններ» խորագրով ուսանողական հետազոտական աշխատանքների նյութերի ժողովածուի երաշխավորման մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.դ., պրոֆեսոր Կ. Վարդանյանը, հ.գ.թ. դոցենտ Լ. Սարգսյանը

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Երաշխավորել «Հոգեբանական հետազոտություններ» խորագրով ուսանողական հետազոտական աշխատանքների նյութերի ժողովածուն և հաստատել տպագրության:

Լ Ս Ե Ց Ի Ն - Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի դասախոս, հոգեբանական գիտությունների թեկնածու Անի Խուդոյանի դոցենտության երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հ.գ.թ. դոցենտ Ռ.Պետրոսյանը, Հ.գ.թ. դոցենտ Լ.Սարգսյանը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Երաշխավորել դոցենտության ամբիոնի դասախոս, հոգեբանական գիտությունների թեկնածու Անի Խուդոյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի դասախոս, հոգեբանական գիտությունների թեկնածու Արաքսյա Կաթունյանի դոցենտության երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հ.գ.թ. դոցենտ Ռ.Պետրոսյանը, Հ.գ.թ. դոցենտ Լ.Սարգսյանը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Երաշխավորել դոցենտության ամբիոնի դասախոս, հոգեբանական գիտությունների թեկնածու Արաքսյա Կաթունյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն. - Հայ-Ռուսական համալսարանի հոգեբանության ամբիոնի հայցորդ Աննա Կետովա թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.դ., պրոֆեսոր Կ. Վարդանյանը, հ.գ.թ. դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ. դոցենտ Լ. Սարգսյանը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Հաստատել Հայ-Ռուսական համալսարանի հոգեբանության ամբիոնի հայցորդ Աննա Կետովայի գիտական ատենախոսության թեման՝ «Տիտղոսակիր էթնոսի երիտասարդների հուզական ինտելեկտի, էթնիկ ինքնության և հոգեբանական բարեկեցության փոխկապվածությունը (հայ և ռուս երիտասարդների օրինակով)» ԺԹ.00.01 /Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն/ մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել հ.գ.դ., պրոֆեսոր Մ.Ս.Բերբերյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն. - Հայ-Ռուսական համալսարանի հոգեբանության ամբիոնի հայցորդ Լուսինե Հրաչի Պողոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.դ., պրոֆեսոր Կ. Վարդանյանը, հ.գ.թ. դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ. դոցենտ Լ. Սարգսյանը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Հաստատել Հայ-Ռուսական համալսարանի հոգեբանության ամբիոնի հայցորդ Լուսինե Հրաչի Պողոսյանի գիտական ատենախոսության թեման՝ «Մոտիվացիայի, ինտելեկտի և մոդալականության փոխկապվածությունը անձի ռեպրեզենտատիվ համակարգի զարգացման համատեքստում (կրտսեր դպրոցականների օրինակով)» ԺԹ.00.01 /Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն/ մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել հ.գ.դ., պրոֆեսոր Մ.Ս.Բերբերյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն. - Ակադեմիկոս Մկրտիչ Մազմանյանի հոգեբանության ամբիոնի հայցորդ Արսեն Արծրունու թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.դ., պրոֆեսոր Կ. Վարդանյանը, հ.գ.թ. դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ. դոցենտ Լ. Սարգսյանի,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Հաստատել Մ.Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի հայցորդ Արսեն Արծրունու թեման՝ «Ցմահ դատապարտյալների անձնային առանձնահատկությունների և քոփինգ ռազմավարության փոխազդեցության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» խորագրով ԺԹ.00.05 /Սոցիալական հոգեբանույթյուն/ մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել հ.գ.թ., դոցենտ Լ.Սարգսյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն. - Կիրառական հոգեբանության ամբիոնի հայցորդ Գոհար Վալերիկի Անտոնյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.դ., պրոֆեսոր Կ. Վարդանյանը, հ.գ.թ. դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ. դոցենտ Մ. Ավետիսյանը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Հաստատել Կիրառական հոգեբանության ամբիոնի հայցորդ Գոհար Վալերիկի Անտոնյանի թեման՝ «Հուզական, սոցիալական ինտելեկտի և բնավորության գծերի հարաբերակցությունը դեռահասների փոխհարաբերություններում» ԺԹ.00.05 /Զարգացման և կրթության հոգեբանույթյուն/ մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել հ.գ.թ., դոցենտ Մ.Ս.Ավետիսյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն. - Կիրառական հոգեբանության ամբիոնի հայցորդ Զամբրե Ջիվան-Ջոնսոն Տրայֆենայի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.դ., պրոֆեսոր Կ. Վարդանյանը, հ.գ.թ. դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ. դոցենտ Մ. Ավետիսյանը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Հաստատել Կիրառական հոգեբանության ամբիոնի հայցորդ Զամբրե Ջիվան-Ջոնսոն Տրայֆենայի թեման՝ «Հայ երիտասարդների էթնիկ նույնականացման սոցիալ-հոգեբանական դրսևորումները ԱՄՆ-ի սոցիալ-

մշակութային միջավայրում» ԺԹ.00.03 /Սոցիալական հոգեբանություն/ մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել հ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ռ.Գևորգյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն. - Կիրառական հոգեբանության ամբիոնի հայցորդ Ժուլիետ Հայկազի Դավթյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.դ., պրոֆեսոր Կ. Վարդանյանը, հ.գ.թ. դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ. դոցենտ Մ. Ավետիսյանը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Հաստատել Կիրառական հոգեբանության ամբիոնի հայցորդ Ժուլիետ Հայկազի Դավթյանի թեման՝ «Ազգային կարծրատիպերի ազդեցությունը դեռահասների արժեհամակարգի ձևավորման գործում» ԺԹ.00.05 /Զարգացման և կրթության հոգեբանություն/ մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել հ.գ.թ., դոցենտ Մ.Ս.Ավետիսյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն. – ԿՀՍ ֆակուլտետի Անձի հոգեբանության և հոգեբանական խորհրդատվության բաժնի մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողուհի Արուսյակ Կիրակոսյանի (տեղափոխված) մագիստրոսական աշխատանքի թեմա հաստատելու և գիտական ղեկավար նշանակելու մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Հ.գ.թ., պրոֆեսոր Կ. Վարդանյանը, Հ.գ.թ., դոցենտ Լ.Սարգսյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Արուսյակ Կիրակոսյանի մագիստրոսական աշխատանքի թեմա հաստատել «Աուտոագրեսիայի դրսևորման սոցիալ-հոգեբանական պատճառները դեռահասության տարիքում» և գիտական ղեկավար նշանակել հ.գ.թ. դոցենտ, Լ.Սարգսյանին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. Պետրոսյան

Իսկականի հետ ճիշտ է՝

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն. Հարությունյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8.

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2023 թվականի մայիսի 25-ի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022-2023 ուստարվա ամառային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների քննարկում:
2. Ուսումնական և ԳՀԱ-ի դրվածքը Հոգեբանության, Կիրառական հոգեբանության և Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնների գծով բակալավրիատում և մագիստրատուրայում:
3. Ուսանողների հետ տարվող ուսումնական և ԳՀ աշխատանքները ֆակուլտետում:
4. Ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ՈՒԳԸ-ի գործունեության վերաբերյալ:
5. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան հ.գ.թ. դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը:

ԼՍԵՑԻՆ.- 2022-2023 ուստարվա ամառային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը, որը ներկայացրեց ամփոփիչ քննությունների քննարշրջանի կազմակերպման մանրամասները, իսկ

ֆակուլտետի ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Արամյանը ներկայացրեց քննությունների անցկացման ժամանակացույց, լսարանային ապահովվածության գրաֆիկը, քննության պատասխանատուների և համապատասխան ընթերակաների հետ աշխատանքի արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել 2022-2023 ուստարվա ամառային քննաշրջանի ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունքները:

ԼՍԵՑԻՆ.- Բակալավրիատում և մագիստրատուրայում Հոգեբանության, Կիրառական հոգեբանության և Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոններում ուսումնական և ԳՀԱ-ի դրվածքի մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ Ս.Մակիչյանը ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում ուսանող-դասախոս գիտահետազոտական համագործակցության մանրամասները, ներբուհական և համալսարանից դուրս կազմակերպվող գիտաժողովներում ուսանողների ներգրավվածությունը, ՊԴԱ-ի մասնակցությունը ուսանողների գիտական գործունեությանը և գիտական հրապարակումների երաշխավորմանը: (ՊԴԱ գիտական հրապարակումների ցանկը կցված է):

Ֆակուլտետի ամբիոնի վարիչները ներկայացրեցին համապատասխան ամբիոնների գործունեության արդյունքները գիտական և հետազոտական ուղղությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Բավարար գնահատել Բակալավրիատում և մագիստրատուրայում Հոգեբանության, Կիրառական հոգեբանության և Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոններում ուսումնական և ԳՀԱ-ի աշխատանքների արդյունքները:

ԼՍԵՑԻՆ.- Ուսանողների հետ տարվող ուսումնական և ԳՀ աշխատանքների մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը, որը ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում միջոցառումների շրջանակը, որը պարբերաբար իրականացվում է ուսանողներին հետաքրքրելու և գիտահետազոտական ակտիվության մեջ ակտիվորեն ներգրավելու համար: Հոգեբանության ամբիոնի վարիչ Լ.Սարգսյանը հավելեց, որ 10.05.2023թ. անցկացվել է թվով երկրորդ «Հոգեբանական հետազոտություններ» խորագրով գիտաժողովը, որի բուն մասնակիցները եղել են ֆակուլտետի ուսանողները՝ ներկայացնելով իրենց գիտական ղեկավարի հետ միասին իրականացրած հետազոտության արդյունքները: Նա նաև նշեց, որ նշված հետազոտության արդյունքները ամփոփվել են գիտական ժողովածուում:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Բավարար գնահատել ուսանողների հետ տարվող ուսումնական և ԳՀ աշխատանքների արդյունքները:

ԼՍԵՑԻՆ.- Ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ՈՒԳԸ-ի գործունեության վերաբերյալ հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Ի.Անանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Բավարար գնահատել ուսանողների հետ տարվող ուսումնական և ԳՀ աշխատանքների արդյունքները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. Պետրոսյան

Իսկականի հետ ճիշտ է՝

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն.Հարությունյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9.

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2023 թվականի հունիսի 29-ի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022-2023 ուստարվա ամառային քննաշրջանի արդյունքների պատկերը:
2. 2022-2023 ուստարվա առկա և հեռակա ուսուցման ավարտական որակավորման քննությունների արդյունքների քննարկում:
3. Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2-րդ, 3-րդ կուրսերի մանկավարժական/ուսումնական և մագիստրատուրայի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկաների արդյունքների ամփոփում:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ռ.Հ.Պետրոսյանը

ԼՍԵՑԻՆ.- 2022-2023 ուստարվա ամառային քննաշրջանի արդյունքների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը, որը ներկայացրեց ամառային քննաշրջանի արդյունքները, անցկացման ընթացքում ծագած հարցերը և

դրանց անհապաղ լուծումները: Նա նաև նշեց, որ բարելավում է նկատվում ընդունված ժամկետներում դասախոսների կողմից տեղեկագրերը լրացնելու ուղղությամբ. նրանք ավելի պարտաճանաչ և ուշադիր են վերոնշյալ հարցերում:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 2022-2023 ուստարվա ամառային քննաշրջանի արդյունքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- 2022-2023 ուստարվա առկա և հեռակա ուսուցման ավարտական որակավորման քննությունների արդյունքների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը, որը ներկայացրեց 2022-2023 ուստարվա առկա և հեռակա ուսուցման ավարտական որակավորման քննությունների արդյունքները, մասնավորապես անդրադառնալով ուսանողների ներկայացման առանձնահատկություններին, ներկայացման ժամանակ ծագած կրկնվող հարցերին (օրինակ՝ խոսքի և տեսասահիկի անհամապատասխանություններին, առաջնային և երկրորդային ինֆորմացիան ներկայացնելու դժվարություններին, ղեկավարի հետ անբավարար աշխատանքի դեպքերին): Նա մասնավորապես նշեց, որ ավարտական և մագիստրոսական թեմաներն այսուհետ պետք է առավել ուշադիր դիտարկվեն ամբիոնների վարիչների կողմից, քանի որ հաճախ են հանդիպում նմանատիպ թեմաներ, ինչպես նաև նա հորդորեց զերծ մնալ կրկնվող, նույն տարիքային խումբը և հոգեկան գործընթացները պարունակող թեմաներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել 2022-2023 ուստարվա առկա և հեռակա ուսուցման ավարտական որակավորման քննությունների արդյունքները:

ԼՍԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2-րդ, 3-րդ կուրսերի մանկավարժական/ուսումնական և մագիստրատուրայի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկաների արդյունքների ամփոփման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի կրթական ծրագրի պրակտիկայի ղեկավարներ Ե.Հովհաննիսյանը և Գ.Հարությունյանը, որոնք ներկայացրեցին հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2-րդ, 3-րդ կուրսերի մանկավարժական/ուսումնական և մագիստրատուրայի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկաների արդյունքները, ներկայացնելով ուսանողների հաճախելիությունը, պրակտիկայի բազաների արդյունավետություն/անարդյունավետությունը, ուսանողների կողմից պրակտիկայի պաշտպանության առանձնահատկություններին և այլն:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2-րդ, 3-րդ կուրսերի մանկավարժական/ուսումնական և մագիստրատուրայի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկաների արդյունքները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. Պետրոսյան

Իսկականի հետ ճիշտ է՝

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն.Հարությունյան